ԴՐԿԱԾՔ

BookMark

DAN BILZERIAN

THE SETUP

BookMark

ԴԵՆ ԲԻԼԶԵՐՅԱՆ

ԴՐԿԱԾՔ

18+

Թարգմանությունն անգլերենից՝
Դավիթ Սարգսյանի,
Աստղիկ Աթաբեկյանի,
Լիանա Զաքարյանի,
Լիլիթ Գրիգորյանի,
Աստղիկ Սարգսյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2022

BookMark

ՀՏԴ 82-94
ԳՄԴ 84
Բ 622

Բ 622 Բիլզերյան Դեն
Դրվածք / Դեն Բիլզերյան.- Եր.: Newmag, 2022.- 528 էջ:

Այս ինքնակենսագրականում աշխարհի ամենահայտնի սոցցանցային աստղը պատմում է, թե սովորական ամերիկահայ տղան ինչպես է համաշխարհային փառք ձեռք բերել: Դենի կյանքն արտառոց է՝ սկսած ԱՄՆ բանակում ծառայությունից, պոկերում հաջողություններից մինչև զենքի հանդեպ սերն ու սեռական անհագուրդ կիրքը: Դեն Բիլզերյանն անկեղծ ներկայացնում է իրեն շրջապատող մարդկանց ու երևույթները, բացահայտում պարզ ճշմարտություններ, որոնց մասին սովորաբար լռում են: «Դրվածքը» պատմություն է խելահեղության հասնող զվարճամոլության, իրականություն դարձած անուրջների, վերելքներ խոստացող անկումների մասին: Այն ներկայացնում է շքեղախենթ աշխարհը, որում ապրում է Դեն Բիլզերյանը:

ՀՏԴ 82-94
ԳՄԴ 84

ISBN 978-9939-884-52-3
The Setup ©2021 Goat Books, LLC. All rights reserved.
Դեն Բիլզերյան «Դրվածք» ©2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Գիրքը հրատարակվել է հեղինակի հետ կնքած պայմանագրով:

18+ Գիրքը նախատեսված է 18 տարեկանից բարձր ընթերցողի համար, պարունակում է ոչ նորմատիվ ձևակերպումներ և էրոտիկ լուսանկարներ:

BookMark

Հորս շնորհակալ եմ
այս գիրքը ջանադրաբար սրբագրելու համար:
Կներես, որ առաջարկներդ չեմ ընդունել:

«Իսկական աղետ կլինի, եթե այս գիրքը հրատարակես այս վիճակով»:

ՊՈԼ ԲԻԼԳԵՐՅԱՆ

BookMark

«Ճշմարտությունը սիրուց,
փողից ու փառքից առավել է»:

ՀԵՆՐԻ ԴԵՅՎԻԴ ԹՈՐՈ

BookMark

Բովանդակություն

Առաջաբան 13

Նախաբան 16

ՄԱՍ 1 **ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ** 18

Գլուխ 1 Բանտ 19

Գլուխ 2 Ժամանակը փող է 22

Գլուխ 3 Էրնի 28

Գլուխ 4 Մեծ Դենը 35

Գլուխ 5 Երբ զրկվեցի կուսությունից 38

Գլուխ 6 Շանտաժ 42

Գլուխ 7 Տամպայի մասնավոր դպրոցում 47

Գլուխ 8 Առաջին կռիվը 51

Գլուխ 9 Ծանոթանալու վախը 53

Գլուխ 10 Յուտայի քրեական օրենսգիրք N 76-10-505.5 58

ՄԱՍ 2 **ԲԱՆԱԿՈՒՄ** 62

Գլուխ 11 Բարի գալուստ նավատորմ 63

Գլուխ 12 Ռազմածովային ուժերի ուսումնական կենտրոն 68

Գլուխ 13 Դժոխային շաբաթ 74

Գլուխ 14 Տիխուանայի ստերոիդները 83

Գլուխ 15 «Միջուկային» կիսամարաթոն 89

BookMark

Գլուխ 16 Եթե սկզբում ձախողում եք ... 91
Գլուխ 17 Առավելություններ փնտրելով ... 94
Գլուխ 18 Հետույքային արկածներ ... 100
Գլուխ 19 Թուլամորթ պատասխանատուն ... 104
Գլուխ 20 Հավատարմագրային հիմնադրամի բռնագրավումը ... 107
Գլուխ 21 Շուտով կավարտեմ ... 112
Գլուխ 22 239-րդ խումբ ... 117

ՄԱՍ 3 **ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ** ... 120
Գլուխ 23 Եղբայրական օրգիա ... 121
Գլուխ 24 Մնանկացում ... 126
Գլուխ 25 Ցոփ ու շվայտ ... 129
Գլուխ 26 Ռուս մարդասպանը ... 135
Գլուխ 27 Մոլլիի խաղը ... 139
Գլուխ 28 Սրտի կաթված ... 141
Գլուխ 29 Առանց խղճի խայթի ... 149
Գլուխ 30 Մի՛ խաբվիր ... 156
Գլուխ 31 Անտոնիո ... 160
Գլուխ 32 Ջեսա ... 164
Գլուխ 33 Ford-ն ընդդեմ Ferrari-ի ... 174
Գլուխ 34 Պոնզիի սխեման ... 180
Գլուխ 35 Սան Դիեգո. վրեժ ... 182

BookMark

Գլուխ 36 Ատում եմ շշելը 186
Գլուխ 37 Ինստագրամ 192
Գլուխ 38 Սեմ 194
Գլուխ 39 Պարտքերից փրկվածը 205
Գլուխ 40 Խաղադրույք Բուգատիի վրա 212
Գլուխ 41 Լոս Անջելես 214
Գլուխ 42 Մազաթափում 218
Գլուխ 43 Սեղանի մոտ փողերդ մի՛ հաշվիր 221
Գլուխ 44 Անցում 227
Գլուխ 45 Սեմ, Մաս 2 230
Գլուխ 46 Սեմ, Մաս 3 233
Գլուխ 47 Գրազ ամեն ինչի վրա 237
Գլուխ 48 Վիկտորյան 240
Գլուխ 49 Սեմ, Մաս 4 243
Գլուխ 50 Կինոդերեր 246
Գլուխ 51 Փափլիկի դատը 251
Գլուխ 52 Տալը վերցնելուց լավ է 256
Գլուխ 53 Պուերտո Վալարտա 258
Գլուխ 54 Առնվազն 5 միլիոն 262
Գլուխ 55 Նախանշան 266

ՄԱՍ 4 **ՓԱՌՔ** 268
Գլուխ 56 Պլանը 269

BookMark

Գլուխ 57 Էկզոտիկ մեքենաներով մրցավազքը ... 276
Գլուխ 58 Սթիվ Ակի ... 280
Գլուխ 59 Ինչպես պոռնոաստղուհուն նետեցի տանիքից ... 287
Գլուխ 60 Փառքի կոճակը ... 297
Գլուխ 61 Ինչպես դարձա ոստիկան ... 305
Գլուխ 62 Չարաճճի գաճաճը ... 310
Գլուխ 63 Դաջվածքը ... 318
Գլուխ 64 Լինդսին ... 320
Գլուխ 65 Ինձ սկսեցին վճարել ... 325
Գլուխ 66 Սամանտան և ընկերները ... 327
Գլուխ 67 Tannerite պայթուցիկը ... 339
Գլուխ 68 Արտ Բազել ... 343
Գլուխ 69 Դպրոցական աղջիկներն ու ընձուղտը ... 352
Գլուխ 70 «Փառքի ուղեղ» ... 360
Գլուխ 71 Տեխասցի Թիմը ... 368
Գլուխ 72 Հեդոնիզմի փոթորիկը ... 373
Գլուխ 73 Ավելի մեծ զբոսանավ է պետք ... 378
Գլուխ 74 Նախագահական շրջագայություն ... 383
Գլուխ 75 Ջեքսը ... 395
Գլուխ 76 Երբ չափից շատ ես հոգատար ... 400
Գլուխ 77 Հեծանվի գրազը ... 410
Գլուխ 78 Ոչ մի սեքս ... 418
Գլուխ 79 Ցանկությունների ռանչոն ... 420
Գլուխ 80 Հարեմ ... 428

BookMark

ՄԱՍ 5 ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԸ 431

Գլուխ 81 Նինա 432

Գլուխ 82 Կրիպտո 439

Գլուխ 83 Կանադական ռոդեո 441

Գլուխ 84 Սոֆիա 445

Գլուխ 85 Հավայան կղզիներ 447

Գլուխ 86 Հարվի փոթորիկը 451

Գլուխ 87 Ահաբեկչություն Լաս Վեգասում 456

Գլուխ 88 Շոնն ու Հաֆփայփը 465

Գլուխ 89 Սեմ, Վերջին գլուխ 469

Գլուխ 90 Ignite 471

Գլուխ 91 Ignite տունը 475

Գլուխ 92 Վերադարձ Լոս Անջելես 481

Գլուխ 93 Միջազգային միջադեպ 485

Գլուխ 94 Արձակուրդ 495

Գլուխ 95 Սեփական կղզիներ 501

Գլուխ 96 Ուղերձ տիեզերքից 505

Գլուխ 97 Երջանկությունն ընդդեմ հաճույքի 507

Գլուխ 98 Վերջին երեկույթը... այս պահին 517

Վերջաբան 523

Երախտագիտության խոսք 526

BookMark

Առաջաբան

Սասը տարի առաջ ոչինչ չէր ստիպի, որ Դեն Բիլզերյանի գրքի համար առաջաբան գրեմ: Կասեի՝ այդ մարդու հետ որևէ ընդհանուր բան չունեմ: Նրա ընտանիքը հարուստ էր, իսկ ես մեծացել էի աղքատության մեջ: Նա խաղում է, իսկ ես՝ ոչ: Նա թմրանյութ է գործածում, ես՝ ոչ: Նա հազարավոր կանանց հետ է պառկել, իսկ իմն առավոտյան չի էլ կանգնում, քանի որ չափից շատ եմ մարզվում: Մեղավոր եմ, որ պախարակել եմ Դենին: Կարծում էի՝ հարստությունը միշտ անարդար առավելություն է տալիս նրան: Խորդուբորդ խաղադաշտում բոլոր շանսերը միշտ նրանն էին. այդպես էին տեսնում իմ տանջված աչքերը: Սև քամակիս պատճառով մարդիկ շատ են քիթները խոթել անձնական կյանքիս մեջ, ես էլ նույնն եմ արել նրա՛ հանդեպ:

Իմ մեծագույն խնդիրն այն էր, որ կյանքին նայում էի շատ նեղ շրջանակի միջով, հետևաբար իմ տեսադաշտն էլ շատ սահմանափակ էր: Այնքան անվստահ էի ու ձախողակ, որ դրանցից այն կողմ ոչինչ չէի տեսնում: Դենի պես մեկին տեսնելիս մտածում էի. «Ոչ մի ընդհանուր բան չունեմ այս վիժվածքի հետ»: Ժամանակ պիտի անցներ, որ հասկանայի՝ ոչ ոք ապահովագրված չէ ձախողումից: Եթե մաշկիդ վրա չես զգացել այն, ինչ ուրիշին է վիճակվել, ուրեմն լավ կլինի՝ ռեխդ փակես, ռադդ քաշես:

Եթե բանը հասել է դրան, ուրեմն ասեմ, որ ես ու Դենն իրարից շատ չենք տարբերվում: Մեր ամենամեծ ընդհանրությունը մեր երիտասարդ ես-երը փոխելու արտասովոր ցանկությունն է: Անկախ նրանից, թե որքան տարբեր են եղել հանգամանքները, անկախ նրանից՝ որքան հարուստ է եղել նա, իսկ ես՝ ոչ, մենք երկուսս էլ, ի վերջո, հայտնվել ենք նույն տեղում, երկուսս էլ մեզ լիարժեք չենք զգացել:

Հաճախ է պարզվում, որ կյանքում մեր բոլոր մեծ խնդիրների հիմքում այն փոքրիկ բաներն են, որոնք չենք ունեցել: Օրինակ, երբ մանուկ էի, թուլակազմ էի, բայց իմ առաջ նպատակ դրեցի դառնալ երբևէ գոյություն ունեցած ամենադիմացկուն մարդը: Դենն էլ ցանկանում էր արժանանալ հոր հավանությանն ու սիրուն: Կարծում էր, թե կանանց համար գրավիչ չէր: Այս և շատ այլ բաներ Դենին ստիպեցին արվեստի մակարդակի հասցնել իր իսկ Դրվածքը:

Երկուսս էլ չպետք է հասնեինք նրան, ինչին հասել ենք: Իմ՝ ավագ դպրոցի տարեգրքում, նկարիս տակ, հազիվ թե գրված լիներ. «Դառնալու է ռազմածովային նավատորմի սպա: Նրա գրքերը տեղ են գտնելու New York Times-ի բեսթսելլերների ցանկում»: Ավելի ճշմարտանման կլիներ հետևյալ գրությունը. «Ամենայն հավանականությամբ մնալու է նույն դասարանում»: Դենի պարագայում էլ ոչ ոք չէր կարող գուշակել, որ երեսունն անց դառնալու է մերօրյա Հյու Հեֆները...

Հենց դա է մտքի գեղեցկությունն ու ուժը: Ձեր անվստահության մեջ հզոր ուժ է թաքնված, որը բացահայտելու համար քաջություն է պետք: Պետք է նայեք հայելուն և ընդունեք ճշմարտությունը, ընդունեք այն, ինչ տեսնում եք, և կարողանաք ազնիվ լինել ինքներդ ձեզ հետ: Պետք է թքած ունենաք հաջողության հասնելու հավանականության վրա, պատրաստ լինեք դեմքով ընկնել ցեխի մեջ, չտանջվեք, թե ուրիշներն ինչ են ասում կամ մտածում... Հայելուն նայելիս գուցե չտեսնեք այն, ինչ ուզում եք տեսնել, բայց պետք է ինքներդ ձեզ վրա խաղադրույք անելու ինքնավստահություն ունենաք: Թե՛ Դենի, թե՛ իմ բարդույթները եղել են առաջ շարժվելու խթանը: Մենք գնացել ենք տարբեր ճանապարհներով, բայց երկուսս էլ, ի վերջո, հայտնվել ենք լուսանցքում:

Որքան էլ անհեթեթ թվա, Դեն Բիլզերյանը երազում էր քնել անհամար գեղեցկուհիների հետ, անասելի հարստանալ և ունենալ ամեն ինչի լավագույնը՝ մեքենա, տուն, խաղալիք, օդանավ և ծխամորճ (կամ ինչ է կոչվում այն բանը, որով կանեփ են ծխում): Ինչ էլ այդ վիժվածքը խաղա, հաղթում է (անկախ նրանից՝ դո՞ւր է գալիս դա ձեզ, թե՞ ոչ): Դենի Դրվածքը նրան դարձ-

րեց սոցիալական մեդիայի ամենահայտնի դեմքերից մեկը: Աշխարհում տասնյակ միլիոնավոր տղաներ սոցիալական մեդիայում ապրում են Դենի ինտրիգներով, միլիոնավոր մարդիկ էլ լուռ հետևում են նրան ու միևնույն ժամանակ զազրախոսում:

Իմ Դրվածքը մի քիչ այլ էր: Ես ցանկանում էի անգութ հոգեառը դառնալ բոլոր այն մարդկանց, որոնք ինձ կասկածում, ծաղրում կամ վախեցնում էին, որոնց համար ես «սևքամակ նիգեր» էի: Ես ուզում էի ինձնով անել նրանց հոգին ու միտքը: Մարդու մեջ ամենից շատ հարգում եմ նրա խոցելի լինելն ու երբեք ոչ մեկի առաջ չարդարանալը: Անիծյալ Դենը չի խնդրում սիրել իրեն: Նա չի խնդրում իրեն հետևել Ինստագրամում կամ սոցիալական մեդիայի այլ հարթակներում: Նայե՛ք, թե ինչպես է այդ անիծյալը հագնվում. ամեն օր՝ նույնը: Նա հասել է մի կետի, որ իսկապես թքած ունի, թե մարդիկ ինչ են մտածում իր մասին: Նա բաց է քննադատության առջև: Եթե այս աշխարհում ավելի շատ մարդիկ կարողանային հասնել այդ կետին, կլինեին այն, ինչ իրականում կան կամ ցանկանում են լինել: Կարևոր չէ՝ մարդիկ ընդունո՞ւմ են նրանց, թե՞ ոչ: Կարևոր է, որ իրե՛նք են ընդունում իրենց:

Դառը ճշմարտությունն այն է, որ բոլորս էլ մի օր մեռնելու ենք: Ոչ ոք չի կարող վիճարկել այս փաստը: Լավ կլինի՝ ձեզ վիճակված ժամանակի ընթացքում լարեք ձեր ուժերն ու գտնեք այն, ինչ փնտրում եք: Դենը, օրինակ, իր ժամանակը ծախսել է իր Դրվածքը կատարելագործելու վրա: Ի վերջո, դո՛ւք եք ապրում ձեր կյանքը, ոչ թե ուրիշը: Չեք կարող արժանանալ բոլորի հավանությանը, և դա միանգամայն նորմալ է: Եթե ընտրեք խամաճիկ լինելն ու թույլ տաք, որ ձեր շուրջ հավաքվածները վերևից խաղացնեն լարերը, այդպես էլ կմնաք գորշ ու կամազուրկ: Շատերն են հարմարվում այդ վիճակին ու ապրում ամբոխին միաձուլված:

Աշխարհը լի է միջակություններով: Աշխարհը յուրահատուկ են դարձնում նրանք, ովքեր լողում են հոսանքին հակառակ և ասում այնպիսի բաներ, ինչից ուրիշները խուսափում են: Այնպես որ, եթե ցանկանում եք առանձնանալ ամբոխից, պետք է ունենաք ձեր սեփական Դրվածքը:

ԴԵՅՎԻԴ ԳՈԳԻՆՍ

ԱՄՆ ռազմածովային նավատորմի պաշտոնաթող սպա,
New York Times-ի բեսթսելլեր գրքերի հեղինակ, տոկուն մարզիկ